Յունվարի 2-ին Ս. պատարագից յետոյ միաբանութիւնը պատարագչի հետ եկեղեցական թափօրով դուրս գալով տաճարից Հանգուցեալ Տ. Մատթէոս Բ. Կաթուղիկոսի թաղման 15-րդ օրուայ կարգը կատարեց։

Յունվարի 27-ին Հանգուցեալ Մատթէոս Բ. Սրբազնագոյն Հայրապետի թաղման քառասունքին Ամենապատիւ Տ. Գէորգ Արքեպիսկոպոսի կարգադրութեամբ հանդիսաւոր սուրբ պատարագ մատուցուեց, որից յետոյ միաբանութիւնը շուրջառաւորուած եկեղեցական թափօրով դուրս եկաւ տաճարից և կատարեց քառասունքի կարգը։ Ներկայ էին ճեմարանի բոլոր աշակերտները, ուսուցչական խումբը և բաւական թուով ժամաւորներ։

Յունվարի 2-ին Մայր Տաճարում ս. պատարագից յետոյ հոգեհանգստեան պաշտօններ կատարուեցին հանգուցեալ Ամանաս ժամհարեանի համար։

Յունվարի 23-ին հանգուցեալ օրիորդ Թամարա Աւետիսեան Ղուկասեանի համար։

Յունվարի. 30-ին՝ երբեմն հրատարակուող «Մեղու Հայաստանի» լրագրի խմբագիր նորոգ հանգուցեալ Պետրոս Միմէոնեանցի համար։

Ստացուած գրքեր.

1. Աստպեսի երկերի ժողովածու հատոր ժ.—Իրանի պատուհասները —պատկեր, արկածներ և վիպակներ, (արտատպութիւններ). Թիֆլիս 1910 թ. գինն է 1 ռ., ընտիր թղթի վերայ հատորը 2 ռ։

2. 1911 г. Армяно—Григоріанскій Календарь, годъ изданія третій, свящ. С. Теръ Ованесянца. 20 коп.

Складъ изданія Ставрополь

3. Բագուի Հայոց մարդասիրական ընկերութեան վարչութեան զեկուցումը 1910 թ. նոյեմբերի 28 և դեկտեմբերի 25 արտակարգ ընդհանուր ժողովին։

*

4. Պրոֆ. Ն. Սագարդա. Ցոյն-Արևելքի Հին-եկեղեցական Աստուածաբանական գիտութիւնը իւր ծաղկման շրջանում (IV—V դար.), նրա գլխաւոր ուղղութիւնները և բնորոշ յատկութիւնները. ռուս. թարգմ. Արտակ վարդապետ Ամբատեանց.

Արտատպութիւն «Արարատ» ամսագրից. Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1910. գինն է 15 կոպ.

5. Հանրային գրադարան. № 2 Հրատարակութիւն Մոսկվայի մի խումբ ուսանողների.

Ա. Վաս. Նեմիրովիչ-Դանչենկո. «Նրանք հինգ էին». թարգ. օր. Մենիկ Թումանեան. Մոսկվա. 1910 թ. գինն է 10 կոպ.

Բ. Վլ. Գելեարովսկիյ. «Փախստական». 1911 թ. Մոսկվա. գինն է 5 կոպ:

6. Լեռնականք. ա. փոքր Կովկասեան ժողովուրդների համեմատական ազգագրութեան Ուրուսքի. գրեց Գր. Տէր-Պողոսեան. Շուշի, 1910 թ. 50 կոպ.

7. № 3. Տրդատ. և Գրիգոր Լուսաւորիչ. գրեց Մ. Առաքելեան. գինն է 15 կոպ.

8. № 4. Սահակ և Մեսրոպ Վ. Փափազեան գինն է 15 կ.

№ 5, 6. Վարդանանց պատերազմը. գրեց Վ. Փափազեան գինն է 30 կոպ.

Ներսէս քհնյ. Տէր-Կարապետեանց Ապաշխարութիւն. Դ. Բագու 1911 գինն է 15 կոպ:

Նոր հրատարակութիւններ.

Զանգ. շաբաթաթերթ, գրական, հասարակական, քաղաքական և տնտեսական. Տարեկան բաժանորդագինն է

Ռուսաստան 4 ռ. Թուրքիա 50 ղրուշ. Եւրոպա 10 ֆրանկ Ամերիկա 2 դոլլար.

Հասցէ. Tauris (Perse) Rédaction du journal «Zang».